ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Սկսած տասնիններորդ դարի վերջին քառորդից, երբ հայկական հարցը դառնում է միջազգային դիվանագիտության խնդրո առարկա և միաժամանակ գործիք մեծ տերությունների ձեռքին, Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդը, Անգլիայի ու Գերմանիայի անմիջական թողտվությամբ, իրականացնում է արևմտահայությանը վերաբերող մի շարք «միջոցառումներ»՝ հայկական հարցը յուրովի «լուծելու» համար: Նախ, սուլթանն Արևմտյան Հայաստանում անց է կացնում վարչական բարեկարգություններ՝ կազմելով նոր վիլայեթներ: Նա հայաշատ գավառները կցում է թրքաշատ-քրդաշատ գավառներին, իսկ թրքաշատ-քրդաշատ գավառները՝ հայաշատ նահանգներին, որպեսզի պակասեցնի հայերի տոկոսը հայկական նահանգներում: Ապա, Համիդը 1880-ական թվականներից, հայերի թիվը պակասեցնելու նպատակով, սկսում է պարբերաբար կոտորել նրանց, որպեսզի բարենորոգումներ չկատարվեն Արևմտյան Հայաստանում: Միայն 1894-1896 թվականներին նա կոտորել է տալիս շուրջ 300.000 հայերի, որոնց մի մասը զոհ է գնում Պոլսի փողոցներում՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի ու Ռուսաստանի դեսպանների բարեհաճ անտարբերությամբ ու նրանց աչքերի առաջ: 1895 թվականի մայիսյան բարենորոգումները և Գլադստոնի կեղծ հայասիրական ճառերը մի նպատակ ունեին միայն. ազդել սուլթանի վրա՝ իրենց տիրապետությունները Մերձավոր Արևելքում ամրապնդելու և նոր զաղութներ ձեռք բերելու համար: Պետությունների այդ հակասությունների հետևանքով, Համիդի իշխանության 33 տարիների ընթացքում Թուրքիայում կոտորվում է շուրջ 500.000 հայ:

Հայ ժողովուրդն իր հարազատ երկրում՝ Հայաստանում, տասնյոթերորդ դարում կազմում էր ազգաբնակչության 98 տոկոսը, իսկ այլազգիները՝ 2 տոկոսը[1], իսկ 1913-1914 թվականներին, տեղի ունեցած հալածանքներից, կոտորածներից, ձուլումներից և գաղթեցումներից հետո, հայերը կազմում էին ազգաբնակչության հազիվ 41 տոկոսը, թուրք-օսմանները՝ 24 տոկոս, քրդերը՝ 16 տոկոս, իսկ այլազգիները՝ 19 տոկոս[2]: Ճիշտ է, հայերն արդեն ազգաբնակչության բացարձակ մեծա-

---

[1] **Վահան Տերյան**, Երկեր, հատոր Ա: Երևան, 1945, էջ 394:

[2] **Լեո**, Հայոց հարցի վավերագրերը: Թիֆլիս:, 1915, էջ 314-357, և «Արարատ», Էջմիածին, 1914, թիվ 9, էջ 810-811:

մասնություն չէին կազմում, բայց առանձին վերցրած կազմում էին ճնշող մեծամասնություն:

Աբդուլ Համիդը, որ հայերին կոտորելու համար «արյունարբու» մականունն էր ստացել, գահընկեց է արվում 1909 թվականին: Թուրքիայում հաստատվում է սահմանադրական միապետություն: Երկրի կառավարության գլուխ կանգնում են ազգայնամոլ «Երիտասարդ թուրքերը», որոնք, որդեգրելով «պան-թուրքիզմի» գաղափարախոսությունը, հայկական հարցում դառնում են ավելի կատաղի թշնամիներ, քան Աբդուլ Համիդը:

Երիտթուրքական «Իթթիհատ վե Թերաքգի» կուսակցության առաջացման գործում մեծ դեր է խաղացել հրեական սիոնիստական միությունը, որը կազմակերպվել էր դեռևս մ. թ. 135 թվականին, և որի նպատակն էր վերականգնել Սողոմոնի կործանված գահը և աշխարհն առնել տնտեսական գերության մեջ: Այդ կազմակերպությունը 1914 թվականին արդեն իշխում էր աշխարհի ամենակարևոր մի շարք բանկերի, երկաթուղիների, հանքերի և նման շատ ձեռնարկությունների վրա, աշխատում էր իր ձեռքում կենտրոնացնել աշխարհի ոսկու պաշարների մեծ մասը և հեշտ կերպով հարմարվում էր բոլոր երկրներում փոփոխված պետական կարգերի հետ: Այդ կազմակերպությունը 1901 թվականին սուլթան Աբդուլ Համիդից պահանջում է Օսմանյան կայսրության տարածքում ստեղծել անկախ հրեական օջախ, որի դիմաց խոստանում էր տալ 20 միլիոն ոսկի և առանց տոկոսի փոխառություն: Բացի դրանից, 5 միլիոն ոսկի էլ նվիրում է իրեն՝ սուլթանին: Սակայն Համիդն այդ առաջարկը մերժում է և միաժամանակ սաստիկ զայրանում բանակցություններ վարող հրեա Էմանվել Գարասուի վրա:

Շուտով Մակեդոնիայում սկսվում է հեղափոխություն: Ըստ իթթիհատական կուսակցության ղեկավարներից մեկի և պառլամենտի անդամ Ռիֆաթի, Էմանվել Գարասուն փողի ուժով Համիդի դեմ 1905 թվականին Սալոնիկում կազմակերպում է մի կուսակցություն՝ «Իթթիհատ վե Թերաքգի» (Միություն և առաջադիմություն), որը հայտնի էր նաև «Երիտասարդ թուրքեր» անունով: Այս կազմակերպությունն անմիջապես իր ճյուղերն է հիմնում Մոնաստերում և այլ վայրերում: «Իթթիհատ վե Թերաքգի» կազմակերպության մեջ մտնում էին Սալոնիկի ուսուցիչները, պաշտոնյաները, մտավորականների և երրորդ բանակի սպաների մի մասը, որոնց թվում հազարապետներ Իսմայիլը, Հազգը, Ջեմալը (Ջեմալ փաշան), հարյուրապետ Էնվերը, Նազիմը, Մուստաֆա Քեմալը (ապագա Աթաթուրք) և ուրիշներ[3]:

Այս կազմակերպությունը սկզբում հանդես է գալիս ընդհանուր մարդկային հումանիստական գաղափարներով՝ առաջնորդվելով ազատության, եղբայրության և հավասարության կարգախոսներով: 1908 թվականի հեղափոխությունից հետո, սակայն, այն գնալով դառնում է ազգայնամոլական, պանթուրքիստական մի կազմակերպություն՝ նամանավանդ այդ կազմակերպության միջուկը՝ Թալեաթ-Էնվերի

[3] **Մելան զադե Ռիֆաթ,** Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը: Բեյրութ, 1938, էջ 148:

գլխավորությամբ: Այդ երևույթն ավելի է ուժեղանում 1912-1914 թվականների ընթացքում, որի հետևանքով այդ կազմակերպությունից աստիճանաբար դուրս են գալիս բարեխիղճ մարդիկ:

Երիտթուրքերի կողմից պետական քաղաքականություն դարձած պանթուրքիզմի նպատակն էր՝ «ազատագրել» թուրքական բոլոր ժողովուրդներին ու ցեղերին և նրանց միավորել մեկ միասնական պետության կազմում: Այդ «պատմական առաքելությունը» պիտի իրականացներ Թուրքիան, որն իր շուրջը պետք է միավորեր ողջ թյուրքական աշխարհը՝ Բալկանյան թերակղզուց մինչև Մանջուրիա՝ իր մեջ ներառելով Բալկանները, Փոքր Ասիան, Ղրիմը, Կովկասը, Դաղստանը, Վոլգայի ափերը (Աստրախանը, Սարատովը, Սամարան, Կազանը՝ մինչև Ուֆա), Կասպից ծովի հարավային ափերը, Ատրպատականը, Ադրբեջանը, Խորասանը, Միջին Ասիան և Ալթայը:

Պանթուրքիզմի նշանաբանն էր՝ «Թուրքիան թուրքերի համար է», այսինքն Թուրքիայում եղած բոլոր ժողովուրդները կա՛մ պետք է թուրքանային, կա՛մ էլ կոտորվեին:

Թուրքիան թուրքացնելու համաթուրքական գաղափարի զարգացման նպատակով շատ բան էր արվել Թուրքիայում մինչև երիտթուրքերը: Այդ քաղաքականությունը, սակայն, հաջողությամբ շարունակվեց նաև երիտթուրքերի իշխանության տարիներին: 1908 թ. իթթիհատական հեղափոխության նպատակը ոչ այնքան միապետության տապալումն էր, որքան Օսմանյան կայսրությունն անդամահատությունից ու կործանումից փրկելը և երկիրը թուրքացնելը: Իթթիհատականների մեծագույն մասը, մանավանդ նրա ղեկավար կենտրոնական կոմիտեն, մոլի ազգայնական պանթուրքիստներ էին: 1913-1914 թվականներին թուրքական կառավարության ղեկավարությունը, նախարարությունները, երկրի կարևոր բոլոր պաշտոնները և համալսարանների բոլոր ամբիոններն անցնում են պանթուրքիստների ձեռքը: Ներքին գործերի նախարար Թալեաթը, պանթուրքիզմի այդ զսպանակը, բոլոր նահանգապետերին՝ մանավանդ Անատոլիայում, նշանակում է պանթուրքիստներից: Եվ ահա Իթթիհատ կուսակցության կենտրոնական կոմիտեն, Թալեաթի և Էնվերի գլխավորությամբ, պանթուրքիզմի ծրագիրն առաջ տանելու համար, որոշում է մտնել պատերազմի մեջ, բնաջնջել Թուրքիայում եղած բոլոր հայերին և, ազատվելով ռուսական ու եվրոպական միջամտությունից, թուրքացնել Թուրքիան, երկիրը մաքրել ոչ թուրք, առաջին հերթին քրիստոնյա տարրերից, վերացնել թուրքականության ճանապարհի վրայից հայկական խոչընդոտը՝ ոչնչացնելով ոչ միայն թուրքահայերին, այլև ռուսահայերին, և Ռուսաստանի պարտությունից հետո իրականացնել թուրքական մեծ պետության միության ստեղծումը:

Իթթիհատական կուսակցության կենտրոնական կոմիտեն, դեռ պատերազմի մեջ չմտած, իր անդամներին ազդարարում էր. «Զմոռանաք, որ համաշխարհային պատերազմի մեր մասնակցության նպատակը սոսկ վերահաս սպառնացող կորուստեն մեզ փրկելը չէ, այլ մենք կհետապնդենք ավելի անմիջական նպատակ

մը, մեր ազգային իդեալին իրականացումը: Մեր ժողովրդին և հայրենիքին ազգային իդեալը մեզմե մեկ կողմե կմղե խորտակել Մոսկովյան թշնամին, ատով հասնելու մեր կայսրության բնական սահմանի մը, որուն մեջ պարփակվին ու միանան մեր բոլոր ազգակից եղբայրները»[4]:

Սարդարապատում պարտված Վեհիբ փաշան, Բաթումում հայ պատվիրակության հետ պայմանագիր կնքելիս, ասում է. «Դուք կտեսնեք, որ ճակատագիրը կքաշե Թուրքիան արևմուտքեն արևելք, մենք հեռացանք Բալկաններեն, մենք կհեռանանք նաև Ափրիկեեն, բայց մենք պետք է տարածվինք դեպի արևելք, հոն է մեր արյունը, մեր կրոնքը, մեր լեզուն: Եվ ասիկա տարերային ձգողություն ունի, մեր եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքեստան և Ադրբեջան են: Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն, և հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրա: Պահանջելով Վանը, դուք կփակէք մեր ճամբան դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը, դուք արգելք կդառնաք մեզ իջնելու Կուրի հովիտը և երթալու Բաքու: Կարսն ու Ախալքալաքը՝ կփակեք մեր ճամբան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշվիք և մեզ ճամբա տաք: Ահա թե որն է մեր հիմնական վեճը: Մեզ պետք են երկու լայն ճանապարհներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժվելու: Մեկ ճամբան Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կտանի դեպի Գանձակ, մյուսը՝ կերթա Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Կուրի հովիտը»[5]:

Ահա սա էր պանթուրքիզմի նպատակը, որը ծրագրել էր ոչնչացնել հայ ժողովրդին: Հայերը պետք է մեջտեղից վերացվեին, անկախ որևէ մի պատճառի կամ առիթի, որովհետև այդպիսին էր պանթուրքիստների քաղաքականությունը:

«Իթթիհատ վե Թերաքգի» կենտրոնը, հակառակ մեծ վեզիր Սաիտ Հալիմ փաշայի, որն ուներ անգլիական կողմնորոշում, ելնելով պանթուրքիզմի քաղաքականությունից, Էնվերի պահանջով որոշում է անցնել Գերմանիայի կողմը ու մտնել պատերազմի մեջ՝ երազելով մեծ Թուրքիայի ստեղծման մասին: Այդ առթիվ Էնվերն ասում է. «... Մեր դարավոր թշնամին Ռուսաստանն է... որ մենք պիտի կրնանք Թուրանի ճամբան բանալ և թուրք միությունը ապահովել: Ընկերներ, կխնդրեմ, հայրենիքի սիրուն կաղերսեմ, այս առիթը ձեռքե չի հանենք և այսօր իսկ Գերմանիո հետ Դաշնակցությունը որոշենք...»[6]: Պեհաէդդին Շաքիրը, համաձայնվելով Էնվերի հետ, ավելացնում է. «Այս ճամբան (այսինքն դաշինքը Գերմանիայի հետ - Ավ. Հ.) փրկության և Թուրանի ճամբան է»[7]: Իսկ Խալիլ բեյը՝ Էնվերի հորեղբայրը, ասում է. «Աշխարհի մեջ անուրանալի ճշմարտություն մըն է, որ

---

[4] **Զարևանդ**, Միացյալ անկախ Թուրանիա կամ ինչ կծրագրեն թուրքերը: 1926, էջ 137-138:

[5] «Հայրենիք», Բոստոն, 1924, հոկտեմբեր, թիվ 12, էջ 97-98:

[6] **Մևլան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը: էջ 29-31:

[7] Նույն տեղում, էջ 32:

Ռուսիա Օսմանյան կայսրության ոխերիմ թշնամին է, և Պոլսո տիրել անոր գլխավոր նպատակը, Ռուսիան այս գաղափարեն հեռացնել անկարելի է»[8]:

«Իթթիհատ վե Թերագգի» կենտրոնի նախագահ Թալեաթը և կուսակցության մեծամասնությունը որոշում են անցնել Գերմանիայի կողմը և մտնել պատերազմի մեջ՝ նպատակ ունենալով Գերմանիայի օգնությամբ հաղթել Ռուսաստանին, գրավել Կովկասը, Ղրիմը, Հյուսիսային Պարսկաստանը և ստեղծել մեծ Թուրքիա: Ինչպես տեսնում ենք, «Իթթիհատ վե Թերագգի» կենտրոնը, որի մեջ մտնում էին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Նազիմը, Շաքիրը, Շյուքրին, Ազին, Խալիլը, ոստիկանապետ Պետրին, թոփալ Իսմայիլը, Խոճա Հասանը և ուրիշներ, ձգտում էին դեպի Թուրան, և որ այդ ճանապարհի վրա եղած հայերը պիտի վերանային՝ որպես այդ ձգտման խոչընդոտներ ու «չար փուշ»: Դեռևս պատերազմից առաջ Շաքիր փաշան Էրզրումի հայերին ասում էր. «Մենք պատերազմը ձեզի համար պիտի ընենք, դուք մեր երկիրն ու ժողովրդին սրտին խրված դաշույն մըն եք, պիտի հանենք այդ դաշույնը, երբ հարմար առիթ ներկայանա: Այդ գործողությունը մենք պիտի կատարենք ստույգ մահե մը ազատվելու համոզումով և վճռականությամբ»[9]: Հարմար առիթը՝ Համաշխարհային առաջին պատերազմն էր, և թուրքերը ճարպիկ կերպով օգտագործում են այն ու կոտորում հայերին: Այս մոլի իթթիհատական Շաքիրն, անձամբ մի խումբ չեթեների գլուխն անցած, կոտորում է Էրզրումի հայերին:

1915 թվականի սկզբին Թալեաթի նախագահությամբ «Իթթիհատ վե Թերագգի» կենտրոնը գաղտնի ժողով է գումարում, որին բացակա էր միայն Ջեմալը: Ժողովը քննում է հայերի հարցը և որոշում. «Առանց սեռի և տարիքի խտրության հայերու մեկ անհատ իսկ չի ձգելու պայմանավ բնաջնջել որոշած և անոր գործունեությունն ոճրագործ և մարդասպաններե բաղկացած մասնավոր կազմակերպություն մը հանձնած է և անոնց ղեկավարություն ալ «եոյակ գործադիր հանձնախումբ» անվան տակ դոկտ. Նազիմի, Պեհաէդդին Շաքիրի և կրթության նախարար Շյուքրիին հանձնած էր»[10]:

Այս ժողովում առաջինը խոսում է դոկտ. Նազիմը, «Իթթիհատ վե Թերագգիի» գլխավոր քարտուղարը, որը մեղադրում է հայերին ու դաշնակցությանը, որ նրանք օգնում են ռուսներին, տեղերում խռովություններ և ապստամբություններ բարձրացնելու մեջ, իսկ Թալեաթը հաստատում է նրա ասածը, որ հայ «իժերը» կրկին անգամ գլուխ են բարձրացրել[11]: Այնուհետև Նազիմը շարունակում է իր ճառը. «Եթե 1909-ի մեր Ադանայի և այլ վայրերու մեջ կատարել տվածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կհասնի, մեր մաքրագործել առաջադրած ուրիշ տարրերը, արաբները, քրդերը կարթնցնե և վտանգ մեկի տեղ երեք կըլլա.

---

[8] Նույն տեղում, էջ 45:

[9] **Ղազար Զագըր**, Հուշամատյան Բարձր Հայքի-Կարինապատում: Բեյրութ, 1957, էջ 603:

[10] **Մելան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 160:

կմեծնա և գործադրություն կդժվարանա. այս ժողովրդին մեջ քանիցս խոսած եմ և հիմա կկրկնեմ. եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական չպիտի ըլլա, օգուտի տեղ վնասն անպայման է, պետք է որ հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետությանց միջամտությունը, թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլա նույնիսկ, խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի: Այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերու մեկ անհատ իսկ չի մնալու պայմանով բնաջնջումը հարկ է...: Ես թուրքությունը կենդանացնելու համար Ձեզի ընկեր, եղբայր եղա, ես թուրքին, միայն թուրքին ապրիլը, այս հողին վրա անկախ իշխող մը ըլլալը կփափագիմ, ոչ թուրք տարրերը թող ջնջվին, որ ազգության և որ կրոնքին ալ պատկանած ըլլան, այս երկիրը ոչ թուրք տարրերեն մաքրել պետք է: Կրոնքը իմ քովս ոչ մեծ արժեք ունի, իմ կրոնքս Թուրանն է»[12]:

Իսկ մոլեռանդ պանթուրքիստ, հայերին ջարդող, «Իթթիհատ վե Թերագգի» կոմիտեի երեքի նախագահ Շաքիրն ասում է. «Մեր ազգային կալվածին մեջ միայն թուրք հառաջադիմությունը և բարգավաճումը կրնանք արտոնել հինեն մնացած ազգերը, անհարազատ և վնասակար խոտերը արմատախիլ ընելով: Մեր հողը մաքրելու ստիպված ենք, մեր հեղափոխության նպատակը, ծրագիրն այս է, ասոր համար էր, որ Իթթիհատ և Թերագգի իշխանություն, «նոր թուրքական պետություն» անունը տվինք, և օսմանցի անվան արժեքը զրոյի իջեցուցինք... Օսմանյան խառնուրդը ազգային դրոշ չունի...»[13]: Իսկ մի այլ առիթով նա նշում էր, որ «Հայերը կանգնած են մի համաթուրքական ու համաթուրանական սրբազան իտեալներու իրականացման ճամբուն վրա, և մենք անխուսափելիորեն կբախվենք անոնց հետ...: Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճամբուն վրայեն այն ամենը, ինչ որ արգելք կհանդիսանա մեր ազգային սրբազան իտեալներուն: Եվ հետո դուք միշտ ռուսներուն հետ եք, դուք անոնց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են: Պատմական թշնամիները»[14]:

Այս ոգով են խոսում նաև մյուսները, հատկապես Թալեաթը, Էնվերը և Խոճա Հասանը: Վիճաբանություններն ու ճառերը վերջանալուց հետո Թալեաթը քվեարկում է. «... Մեկ անհատն իսկ չի մնալու պայմանով հայերուն բնաջնջման մասին միաձայնության գոյացած ըլլալը հասկցվեցավ»[15]:

Այսպիսով, «Իթթիհատ վե Թերագգի» կոմիտեն, ելնելով պանթուրքիզմի իր ծրագրերից, որոշում է Թուրքիայում եղած բոլոր հայերին կոտորել և կոտորում է:

---

[12] **Մելան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 159-161:

[13] Նույն տեղում, էջ 162-163:

[14] **Ալեքսանդր Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը: Աթենք, 1930, էջ 60-61:

[15] **Մելան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 166:

Հայերին բնաջնջելու իթթիհատական կենտրոնի կայացած որոշումից հետո, նույն կենտրոնի գործադիր կոմիտեի երեք անդամները՝ Շաքիրը, Ցյուքերը և դոկտ. Նազիմը, հատուկ նիստ են գումարում հայերի տեղահանման ու կոտորման մեթոդները մշակելու համար: Առաջին նիստում խոսում է նախագահ Շաքիրը՝ հայ ժողովրդի դահիճներից մեկը: Նա, դիմելով իր ընկերներին, ասում է. «Ընկերներ, խիստ կարևոր և ծանր պարտականություն ենք ստանձնում, իսկ կիսատ թողնելիս, պիտի ենթարկվենք հայերի վրիժառությանը և չպիտի կարողանանք փրկվել: ... նման առիթ ամեն ժամանակ չի ներկայանա: ... հայերից ոչ մի անհատ չպիտի մնա...»: «Մեր ընել տալիք գործը անզեն, ձեռքերը կապված հայերը, երեխաները, ծերերն ու անկարները, մինչև վերջին անհատը, սպաննել տալ է: ... Ասիկա հասարակ և վայրագ ոճրագործություն մըն է»: Շաքիրը հայերի ոչնչացման համար հարմար չի գտնում օգտագործել զինվորներին ու ոստիկաններին: Նա նպատակահարմար է գտնում այդ չարագործությանը մեղսակից դարձնել պետական հանցագործներին: Շաքիրը նախաձեռնում է այդ ճանապարհով հավաքագրել մոտ 12.000 բանտարկյալների, զինել և հանդերձավորել նրանց և մեկ կամ երկու ամսվա ընթացքում կազմակերպել հայերի ջարդը: Նազիմը և Ցյուքիրը համաձայնվում են նրա առաջարկին:

Այնուհետև Շաքիրը նախաձեռնում է, որ «քաղաքի և գյուղաքաղաքներու մեջ ուր հայ կա, և անոնցմե որ մեկուն առաջին անգամ բնաջնջելը հարկ է, այդ քաղաքները ներքին նախարարին հետ որոշենք և յուրաքանչյուր շրջանակին պետք եղածին չափ այս ուժերեն կզրկենք: Անոնք մեր նշանակելիք ճամբաներուն հարմար վայրերուն վրա հասնելիք հայ կարավաններուն սպասեն: Ներքին նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներուն վարչական պաշտոնյաներուն կհրահանգե, որ հոն գտնվող բոլոր հայերը պատերազմական շրջանակեն դուրս գտնվելու հարկը պատճառ բռնելով, խումբ խումբ, յուրաքանչյուր երկու օրը անգամ մը ոստիկան զինվորներուն հսկողության տակ, այսինչ ճամբեն, այսինչ տեղ ղրկեին: Ճամբան, անոնց գալուն սպասող մասնավոր կազմակերպության չեթեներուն կեցած վայրը հասնելուն՝ խմբերը մեր չեթեներուն կհանձնեն ու կվերադառնան: Չեթեներն ալ այս հայերը մինչև վերջին անհատը անմիջապես կսպաննեն»[16]:

Այս ծրագիրը, որ մշակում է երեքի կոմիտեն, բխում էր Իթթիհատի վերը նշված որոշումից[17]: Երեքի գործադիր կոմիտեն համաձայնության է գալիս կառավարության հետ, բանտերում եղած ոճրագործ մահմեդականներին ազատում և այդ հանցագործներից կազմում են 12.000 հոգուց բաղկացած չեթեների մասնավոր

---

[16] **Լ. Մեսրոպ**, Տեր-Զոր, Փարիզ, 1955, էջ 258-266, և **Մելան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 180-190:

[17] Այդ մասին պատմում են աղետից ազատված վերապրողները: Տե՛ս «Աղետ և վերածնունդ»: Փարիզ, 1952 և **Լ. Մեսրոպ**, Տեր-Զոր: Փարիզ, 1955:

խմբեր: Այդպիսի չարագործ չեթեների մի խմբի ղեկավար է դառնում ինքը՝ Ծաքիրը, և կոտորել է տալիս Էրզրումի ու նրա վիլայեթի հայերին:

Այս որոշումից հետո Թալեաթը հրամայում է. «Հայերուն իրենց բնակավայրեն հանելով բանակին չկարենալ սպառնալու և կրկին խաղաղությունը չկարենալ խանգարելու համար, ուրիշ վայրերը ղրկվիլը քաղաքային և զինվորական իշխանությանց կողմե, տեսնված պետքին համաձայն, իբր կանխամիջոց, կառավարության կողմե որոշված ըլլալուն, այս որոշումին շուտափույթ գործադրության շատ մեծ պետք կա»[18]:

Այնուհետև երեք հոդվածով հրատարակվում է հատուկ օրենք հայերի տեղահանության վերաբերյալ:

«Հոդված Ա. Երբ ժողովրդին կողմե որևիցե կերպով կառավարության հրամաններուն և երկրին պաշտպանության, արդարության պահպանումին վերաբերյալ միջոցներուն դեմ զենքով դիմադրության տեսնվի, բանակի և զորաբաժիններու հրամանատարները, անմիջապես զինվորական ուժով և խիստ կերպով պատժելու և այս դիմադրությունը հիմնովին բնաջնջելու արտոնված և պարտավոր են:

Հոդված Բ. Զորաբանակի և անկախ կենտրոններու հրամանատարները, զինվորական պետքին համաձայն, լրտեսության և դավաճանության զգացված գյուղ և գյուղախմբերու ժողովուրդը կրնան անհատապես կամ ամբողջականությամբ ուրիշ վայրեր տարագրել ու բնակեցնել:

Հոդված Գ. Սույն օրենքը հրատարակության թվականեն սկսյալ գործադրելի է»[19]:

Օրենքի առաձգական բովանդակությունը վկայում է, որ ամեն քայլափոխում կարելի էր հայերին մեղադրել, ջարդել ու տարագրել: Օրենքը հրատարակվում է այն ժամանակ, երբ ամբողջ թուրքահայ ժողովուրդն իր ղեկավարներով պետության հանդեպ, շատ բարեխիղճ կերպով, կատարում էր իր բոլոր պարտականությունները և ոչ մի առիթ չէր տվել նման օրենքի լույս աշխարհ գալուն:

Կարծում ենք, մեջբերված փաստերը հաստատուն կռվաններ են ցույց տալու համար, որ իթթիհատականները, ելնելով պանթուրքիզմի քաղաքականությունից, շատ վաղուց էին ծրագրել, որ հարմար առիթ ստեղծվելու դեպքում կոտորեն հայերին: Հայերի բնաջնջման այդ ծրագիրը հայտնի էր դաշնակցական որոշ գործիչների, բայց նրանք շարունակում էին լուռ մնալ և գործիք դառնալ թուրքերի ձեռքին: Վերը շարադրված փաստերից միաժամանակ պարզ երևում է, որ թուրքերը, ելնելով իրենց պանթուրքիզմի ծրագրից, պիտի կոտորեին հայերին: Դա անխուսափելի էր, և Համաշխարհային առաջին պատերազմն օգտագործելով կոտորում են նրանց:

---

[18] **Լ. Մեսրոպ**, Տեր-Զոր, էջ 268-269, և **Մելան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 189-190:

[19] **Լ. Մեսրոպ**, Տեր-Զոր, էջ 269-270, և **Մելան զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 190-191:

1916 թ. Օսմանյան կառավարության ղեկավարները, այսինքն իթթիհատականները, տպագրում ու տարածում են մի թռուցիկ, որի մեջ փորձեր են անում իրենց արդարացնել հայերին կոտորելու կապակցությամբ: Թռուցիկն սկսվում է 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմից և վերջանում 1916 թվականով: Թռուցիկում շարադրվում է, որ հայերը Օսմանյան պետության հանդեպ եղել են անհավատարիմ, հակառակ կայսրության մեջ «վայելած արտոնություններին»: Ապա նշվում է, որ սկսած 1878 թվականից, հայերը փնտրում էին ռուսական և անգլիական հովանավորություն, իսկ նրանց գաղտնի կոմիտեները, որոնք 1908 թվականի սահմանադրությունից հետո դարձել էին ազատ, Անտանտի պետությունների օգնությամբ ու նրանց դրդումով ուզում էին Հայաստանը դարձնել անկախ: Այնուհետև թռուցիկում շարադրվում էր, որ իբր թե Բալկանյան պատերազմի ժամանակ հայերը վատ վերաբերմունք են ցույց տվել Ռոդոսթամի մուսուլմանական բնակչության նկատմամբ, և որ իբր թե հայերը բոլոր միջոցներով օգնում էին Անտանտի երեք պետություններին՝ ի վնաս Թուրքիայի ու Գերմանիայի: Այս թեզն ապացուցելու համար թռուցիկում բերվում են մի քանի շինծու փաստեր.

1. Որ իբր ռուսական ցարը մի մանիֆեստով դիմել է թուրքահայերին՝ կոչ անելով ըմբոստանալ Թուրքիայի դեմ: 2. Որ իբր Բիթլիսի ռուսական հյուպատոսը 1912 թ. դեկտեմբերի 2-ին կազմել է մի տեղեկագիր, որի մեջ նշվում էր, որ հայ դաշնակցական կոմիտեն հակաթուրքական ահաբեկչական լայն գործունեություն է ծավալում: 3. Որ իբր հայ կամավորական խմբերի ստեղծումն արդյունք էր ռուսահայերի գործունեության, և որ թուրքահայերը դեմ են եղել կամավորական շարժմանը: 4. Որ իբր թուրքական բանակներ զորակոչված հայ զինվորները դասալքել են և փախել դեպի ռուսների կողմը և այլն[20]:

Այս թռուցիկի և այլ վայրագությունների կապակցությամբ 1917 թվականին Փարիզում Անդրե Մանդելշտամը լույս է ընծայում «Օթթոման կայսրության վախճան» մեծածավալ աշխատությունը, ուր դատապարտում ու պախարակում է թուրքական հետադիմությունը և նրա ցեղասպան քաղաքականությունը:

Իրականում թուրքահայերը և նրա քաղաքական հոսանքներն ու համայնքները 1914 թվականի օգոստոսից մինչև 1915 թ. Ապրիլյան եղեռնը ավելի քան 8 ամիս լիակատար մասնակցություն են հանդես բերում և ծառայություն կատարում Օսմանյան պետության հանդեպ: Հայ գյուղացիները, բանվորները, արհեստավորները, առևտրականները, վաճառականները, մասնագետներն ու զինվորները թիկունքի բոլոր վայրերում, ռազմաճակատների խրամատներում, իրենց ունեցվածքով, դրամով, մտքով, ձեռքերով ու զենքերով անգնահատելի օգնություն են ցույց տալիս թուրքական կառավարությանը պատերազմի ծանր օրերին: Այդ ամիսների ընթացքում ոչ մի հայ թուրքական իշխանության դեմ չի ըմբոստացել, ռազմավարական մի որևէ կետ չի ոչնչացրել և առհասարակ, բացի հնկայական օգուտից, ոչ

---

[20] «Արարատ» օրաթերթ, 1964, մայիս 5, թիվ 6739 (144):

մի վնաս չի պատճառել թուրքին կամ Օսմանյան պետությանը: Դրա համար էր, որ Էնվերը շնորհակալություն է հայտնում հայ ղեկավարներին: Հետևաբար, թուրքահայերը ոչ մի կասկածի տեղիք չեն տվել թուրքական ղեկավարներին իրենց աքսորների և ջարդերի համար: Ճիշտ է, Վանից մինչև Մուսա լեռ, մի շարք քաղաքներում ու վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության ու մղում հերոսական գոյամարտեր, սակայն դրանք տեղի են ունեցել ջարդերի ու տարագրությունների ընթացքում ու հետո միայն, այն էլ ոչ թե պատճառ, այլ որպես հետևանք կամ արդյունք այդ բնաջնջումների ու տարագրությունների:

Հարց է ծագում, ինչո՞ւ իթթիհատականներն իրենց հայաջինջ ծրագիրը ձգձգում են մինչև 1915 թ. գարունը: Մեր կարծիքով, դա ուներ իր պատճառը: Պատերազմի սկզբին գերմանական հրամանատարությունը մեծ հույսեր ուներ, որ մի քանի ուժեղ հարձակումներով կարող էր ջախջախել ու խորտակել ֆրանսիական և ռուսական բանակները, շահել պատերազմը և պարտվող պետություններին պարտադրել ծանր պայմանագիր: Այն ժամանակ Թուրքիան, համաձայն Գերմանիայի հետ ունեցած իր պայմանավորվածության, իր իշխանության տակ կառներ ամբողջ Կովկասը, և հայ ժողովուրդն ամբողջապես կհեծեր թուրքական բռնակալների գարշապարի տակ, որպես մի անպաշտպան ու զերի ժողովուրդ: Դրանով, միաժամանակ, կվերջանար հայկական հարցը, և հայությունն այլևս վտանգ չէր ներկայացնի թուրքերի համար, ուստի և կարիք չէր զգացվի ոչնչացնել հայերին: Ընդհակառակը, վերականգնված Օսմանյան կայսրության մեջ 5 միլիոնից ավելի հայերը՝ որպես հմուտ հողագործներ, արհեստավորներ, բանվորներ, առևտրականներ, վաճառականներ, մասնագետներ, անհրաժեշտ էին թուրքերին՝ երկրի առաջադիմության ու զարգացման համար, որոնք հետագայում, աստիճանաբար, կձուլվեին թուրքերի հետ և կդառնային երկրի համընդհանուր կենսունակ մի ուժ: Գերմանիայի և Թուրքիայի պատերազմական ծրագրերը, սակայն, չիրականացան, և գործի դրվեց կոտորածի մեթոդը: